ՆԻՒ ԵՈՐՔ ԱՊՐԻԼ 1 1892 ԹԻՒ 7

N.Y. 1892

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ ԱԶԳԱՅԻՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԱՄՍՕՑ 1ԻՆ ԵՒ 15ԻՆ

Տէր և Խմբագիր — Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ Editor — M. S. GABRIEL M. D.

202 W. 23d St., New York.

Տարեկան բաժնեգինն է ամեն երկրաց համար 2 թալէր կամ 10 ֆրանք։

Բաժանորդագրութիւնք կը հաշուին Յունվար 1 էն։

Entered as second-class mail matter. at P.O. NewYork. NY

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատկեր Քամառ Քաթիպայի — Հայաստան և Հայ գաղթականութիւնք — Նամակ Կիլիկիայէն — Եգիպտական Նամակաւոր. Նամակ Բ. — Նամակ յԱրևելից — Պատմութիւն Ամերիկայի Հայ Գաղթականութեան. — Նամակ Խմբագրէն առ «Արծագանք» — Քաղաքական, Ազգային, Զանազան և Տեղական լուրեր։



ՔԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

«ՌԱՖԱՅԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ»

(Հրատարակութիւն «Հայք»ի)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՒ

ՀԱՅ ԳՐԱԳԻԱԿԱՆՈՒԹԻՒՆՔ

Ա.

Հայն Պուլկարին նման ցեղային մերձ արեանակցութիւն չունի մեծագոր ազգի, և Հայ եկեղեցին ևս արդէն չատոնց բաժնուած՝ անկախ դիրք առած է հանդէպ հզօրագոյն եկեղեցեաց։ Ապաքէն հզօրագոյն պետութիւններ և եկեղեցիներ համակրալից գիրկընդխառնութեան հրաւիրած են զՀայաստան։ բայց սա գիտցած է ետ քաշուիլ արուեստական այն սատիկ ջերմութենէ որ լուծիչ մանաւանդ քան ջեռուցիչ բնութիւն ունի։ Այս ազգային ուղղութեան հետեւելով է որ մեր այժմուխոհական գործիչք ևս կը զգուշանան Հայկական Ինդիրը Եւրոպական հակընդդէմ կուսակցութեանց միոյն կամ միւսոյն գործի անելէ։

Այսպէս հզօրագոյնք չկարենալով զմեր եկեղեցի և ցեղ անոյշ անել իրև ննդարար և բաղձալի պատառ, գուցէ մինչև անգամ ցասմնախառն անհամբերութեամբ կը դիտեն զմեզ։ Մեր մէջ պարզամիտ համարուածներն անգամ իրապէս են յարաբերութեանց այս վիճակին։

Բ

Որովհետև արտաքին օգնութեան մեծ յոյս չունի Հայաստան, և զի բաղձացող չէ օտարի շահախնդիր աջակցութեան, ինքն իւր վերայ դնելով իւր յոյս պարտի իւր բոլոր ոյժ գործածել, և գործածել ծայրագոյն իմաստութեամբ։

Արդ ի՞նչ վիճակի մէջ են իւր ուժեր, և ո՞ւր են իւր իմաստուն առաջնորդք։ Թուրք կառավարութիւնն հայաշատ գաւառներէն հեռացուցած է աշքի զարնող առաջնորդներն և ուսուցիչներն, և յետին խստութեամբ կը հսկէ երկրորդ կարգի կարողութիւն ունեցողներուն վերայ։ Տարիներ առաջ Հանրային Կրթութեան Պաշտօնարանին հրամանաւ իրև անվնաս հրատարակուած են այնպիսի գրքեր և տետրներ, որոց փոշին իսկ այսօր նոյն Պաշտօնարան թունաւոր կը համարի։ Տեսակ մի հեռադիտակ կը գործածէ կառավարութիւնն և տասն կամ քսան տարիներով անցեալ հեռացեալ փոշեսեռակ յանցանքներն ահագին ոճիրներու խոշորութեամբ կը գտնէ, և ահա յանկարծ կը ձերբակալուի այս ինչ երիտասարդ կամ այն ինչ եկեղեցական։ Կառավարութեան այս անօրէն բծախնդրութիւնն հանգոյն Դեմոկ-

լեան սրոյ կը շաղշպոյ ամէն ուսեալ, խորհող և հարուստ Հայու գլխոյն վերայ, և անհնար կը գործէ դպրոցական կամ գործով առաջնորդութիւնն հայ ժողովրդեան մէջ։

Միւս կողմանէ մեր քաջ պատրիարք իւր ձեռք ժողովրդեան արտօրոյ սրտին վերայ դնելով հանդարտեցուցանելու փոխանակ՝ այնպիսի կնդրակներ կ'ուղղէ նմա որ զաւազանի դայրոյին հարուածներու նման կը սարսռեցուցանեն սրտէն զարհուրելու հօտն։

Այդ հայրական հարուածներ շատ ազդած չեն Զէյթունի, քանզի կիլիկեան թղթակցութիւնէն կը կարդանք ուեալի հեռուն, կը տեսնուի թէ Զէյթունի քաջերէն ոմանք նորէն լեռն ելած են, և կառավարութեան անտանելի և անրնդհատ խռուութիւններն նոր յուզմանց մէջ պիտի նետեն այդ նահատակ քաղաքն։

Ո՞վ կը խորհի Զէյթունն փրկելէ անօգուտ և անպտուղ ցնցումներէ։ Պատրիարքն իւր բոլոր այժ նուիրած է կենդակ գրելու։ և Ազգ։ Ժողովոյ նոտերու վերսկսման տրտունութիւնն Բ։ Դռնէն ստանալու կամ չստանալու։

Գ

Խեղճ Հայաստանն շղթայի զարնուած գերի մ'է անոք և անմխիթար և պեսութիւններէն և պատրիարքարաններէն իւր աչք դարձուցած է դէպի Հայ Գաղթական Աշխարհն։

Փոքր փոքր է, բայց ձայնն հեռուն կը հասնի։ Ամէն փոքր և մեծ գաղթականութեան համբաւն ալ հասած է տառապեալ Հայաստանի ուշադիր ականջաց։ Ո՛ Գաղթական հայեր, Հայաստան և Զէյթուն մեզ կը նային, թէպէտ ուղեմք մեք թէպէտ ոչ։ Նոցա վերջին յոյսն եմք մեք։

Պիտի օգնե՞մք նոցա, պիտի կարեկցի՞մք Զէյթունի։

Երբ անցեալ տարի Զէյթունէն խորհուրդ հարցուցաւ «Հայք»ի Խմբագրէն, ան խրատեց որ հանդարտ մնայ, և մնաց։ Բայց Խռուարարութեան անողորմ հալածանքն տարբեր թելադրութիւններ կ'ընէ այդ քաջերու և վախ կայ որ մառնակի և յանախադէպ ապստամբութեանց մէջ յոգնին և ապառին առանց հայ դատին արդեամբ ծառայելու։

Պէտք է կամ զԶէյթուն հանդարտ պահել հանդուրժելի կացութեան մէջ, կամ այնպիսի ապստամբութեան մի կարող անել զնա յորմէ Ազգն ուղղակի օգտուի։

Այս միայն մին է այն խնդրոց որք գաղթական Հայոց անմիջական ուշադրութիւնն կը պահանջեն։

Խնդիրներ բազում են և կնճռուտ, կացութիւնն անտանելի է, և քաղաքական դիպմունք կրնան մօտաւոր ապագայում դատապարտել զՀայաստան դառնագոյն բաժակ մ'ըմպելու։

Որպէս զի Հայ Գաղթական Աշխարհն յանկարծակիի չգայ, պարտի կրկնապատիկ փութով պատրաստուիլ կատարելու իւր մեծ դեր յորմէ հրաժարիլ պիտի լինէր յաւիտենական ամօթ։

Գաղթականութեանց իւրաքանչիւրն առանձին չզօրեր շատ բան անելու, բայց ամէնն միանալով կարող կը լինին մեծամեծս գործել։ Մանչէսթրի և Փարիզի մէջ ունիմք հարուստ վաճառականներ, ի Հնդիկս և յԵգիպտոս են նոյնպէս մեծագանձ և բարձրագիր հայրենակիցներ։ Աշխարհի հինգ մասանց մէջ ևս ցրուած կան խորհրդատու կամ առաջնորդ լինելու արժանի անձնաւորութիւններ որոց մէջէն երեք կամ հինգ հոգի կրնան որոշուիլ իբրև ներկայացուցիչ Հայ Գաղթական Աշխարհի կամ գոնէ գաղթական Հայ ընկերութեանց։ Այս հնարաւոր է և գործնական։

Հնարաւորէ կ'ասեմք վասն զի Կեդրոնական Յանձնախումբ մի ստեղծելու առաջարկն յուսափայլ ընթացք մի կ'առնու պրոշպեկտ։ Ժողովուրդն իւր դրամական օգնութիւնն ժիտելով մեծապէս կակղացուցած է այնպիսի հակառակորդներն։ Փարիզէն, Լանտանէն, Գահիրէէն, Թապրիզէն, Սուրապայայէն, Կալկաթայէն, Թրոյէն Նիւ Հէյվընէն եկած պաշտօնական և կէս պաշտօնական թղթակցութիւնք կը վկայեն թէ Նիւ Եորքի Յանձնախումբն անհնարին առաջարկ մի չէ ըրած։ Կան նաև միւսներն յանձնախմբեր որք ցարդ հրապարակ եղած չեն բայց կը գործեն լռիկ։ Գիտեմք Արտրիկայի մէջ մին այդ լուռ ընկերութեանց որ արդէն 500 ֆրանքի գումար մ'ունի իւր համեստ արկղի մէջ՝ Կեդրոնական Յանձնախմբի տրամադրութեան տակ դնելու։ Եթէ հաստատութեան մի ճշմարիտ հիմն է անոր կարեւորութեան զգալի լինելն հանրութեան, ապացոյց գիտեմք թէ Կեդրոնական Յանձնախմբի հիմնէն խորապէս և չարաչնակ կը հաստատուին գաղթականաց հանրային կարծիքին մէջ։

Ժամանակ է ուրեմն որ մեր հզօրագոյն գաղթականութիւններն ի Փարիզ, ի Մանչէսթր, ի Կալկաթա, յԵգիպտոս, ի Ճավա և այլուր, այս խորանիստ հիմանց վերայ հաստատել ձեռնարկին կեդրոնն։ Առ այս առաջին քայլն այն է որ իւրաքանչիւր ընկերութիւն երկոտասիս մի հրապարակ հանէ իւր համամտութիւն։ Բաղձալի է նաև որ այն խորհող և բանիբուն անհատներ որք այս մասին կարեւոր ասելիք ունին, ասեն առանց այլ ևս վիճանց ապասելով վարանելու։ Անհատներու կարծիքն ալ ունի իւր կշիռ իբրև մասն հանրային կարծեաց։ Ոմանք շափազանց համեստ են։ Մեզ պիտոյ է ուեալի խիզախ լինիլ երբ բարի բան մի յառաջ տանելու վերայ է խնդիրն։ Վատեր իւրեանց ուերումներ շատ ուեալի յարատեւութեամբ կը գործեն։

Մեր մշակեալ և հարուստ հայրենակիցք թող լաւ հասկանան թէ Զէյթուն և Հայաստան իրենցմէ ոչ լոկ նիւթական ձեռնտուութիւն այլ և խորհուրդ կը սպասեն։ Անգութ հեգնութիւն չ՚լինիր ուրեմն ատի զլանալ ամէն խրատ և միանգամայն մեղադրել երբ անխորհուրդ շարժումներ անեն։

Իրարու վերայ ծիծաղելու փոխանակ՝ իրարու աջակից և խորհրդատու լինինք, Հայե՛ր, զի Հայաստան կուլայ և Զէյթուն կը մռնչէ։ Նոքա կ'անեն ինչ որ կրնան։ անենք և մեք ինչ որ մեզ հնար է անել, և անենք փութով։

ՆԵՄԱՆ ԿԵԼԻԿԻՑՅԷՆ

Կիլիկիա։։ 10 Փետր։ 1892

Զէյթունցի ապստամբներն նորէն լեռը փախած են երկու շաբաթէ ի վեր։ Հալէպի վալին աշխատեր է անոնք բռնել, բայց չկրնալով՝ այս անգամ Զէյթունի հարուստներն Հալէպ տարաւ։ և անոնք տանելէն շաբաթ մը ետքը Մարաշէն ալ Տէր Ղեւոնդ Հայրը և Տէվլէթեան կարապետ աղան կանչեց։ Կը գրուցուի թէ ուրիշներ ալ դեռ պիտի կանչուին։ Պատճառը գաղտնիք է մինչև հիմա։ հաւանական է թէ նոր բան մը չկայ, այլ անցեալ տարուան պատահածներուն շարունակութիւնն է։

Զէյթունցի բանտարկեալներն ետ չեկան։ Ղեւոնդ քահանային դուսարը Եղիսարէթն ալ Հալէպ մտրած են, վասն զի ան ալ Զէյթունի մէջ գործեր էր։ Բայց ո՞ւր և ո՞յք բռներ են զինքը, չենք գիտեր։ Եթէ իրաց վիճակը այսպէս երթայ այս ամառ նոր յուզմունք անպատճառ կը պատահին։

Ա։ Ա։

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

ՆԱՄԱԿԻ

Գահիրէ, 1 Մարտ 1892

Բարեկամ. Արդեօք ինչե՞ր շանցաւ մաքէդ նամակիս եռամսեայ ընդհատումի միջոցին. ո՞րքան անգամ, նման հիւրասէր ասանելիկնոջ որ կ'ուզէ անպատճառ լաւ ընդունելութիւն մ'ընել ապատուած հիւրին, սիւնակներ պահեցիր «Հայք»ի մէջ՝ նուիրելու համար Եգիպտական թղթակցութեան — պարահանդէսի և նուագահանդէսի նկարագրութեանց. խօսուած ճառերու բովանդակութեան, նոր բարերարութեան կամ մեծ նուիրատուութեան մը աւետիսին, նոր բարերարի մը մեծ անունին... եթէ այդ ակնկալութեամբ սիրա՛ թուղդ և ականջ ի լուր ապառնցիր, խնէլքդ սիրեմ:

Եթէ անպատճառ բարերարի մասին կ'ուզես որ խօսիմ, յիշեմ քեզ Վանէը Կարապետ Աղան, ղէմք մը որ չիջած է գլեթէ մէկ քառորդ դարէ ի վեր. նկարագրեմ քեզ այդ մարդուն իւղաներկ պատկերը որ ի Խորէնեան վարժարան, Տնօրէն էֆէնտիին սենեակին պատէն կախուած է. Ատատած վկա՛յ մարդուս հաւատալը չգայ — մէջքը Տրիպոլսոյ նախշուն գօտի մը պլլած, գլուխը մոլլայի նման փաթթոց կապած, գեղջուկ խրտ պլլ երևոյթով այս մարդ բարերա՞ր է՛, իրողութիւնն այն է. ատուգիւ բարերար մ'է այս փաթթոցաւոր խեղճուկ վանեցին: Եթէ կուզես երեւակայել մարդուս քրթին բերանին զարնուած ապտակ մը, ըլլայ ձեռքի հարուածով ըլլայ տրամարանական ծանրութեամբ, աչքիդ առջեւ բեր այս յոգթանդամ Վանեցւոյն կիսանկարը. ահագին (իր ժամանակին համար) դպրոց մը կառուցանել, առանց ոստմուկի, մեծարժէք կալուածներ կտակել առանց թմրուկի, բարերարել լոկ բարերարելու համար, ասուգիւ իր ծաղլէն աւելի փոքր՝ անպատճառ շրջանակի մը մէջ կծկուած ամփոփուած այս պատկեր, իւր գոհունակ խղճի ճառագայթներով փայլուն այս դէմք՝ գոդցնես հանապազ մեր վրայ կը ծիծաղի երբ ազգային նիւթերով Պէն—էլ—Սուրէնի առաջնորդարանի դահլիճը կը դղրդենք իւր կտակած կալուածոց հասոյթով ազգային ենտուկին ելեւմուտքը քննարկելու համար. կ'արգահատի Կարապետ Աղան, երբ իրենց գրպանէն փուլ մը չվճարող պարոնայք երեսփոխանք իրարու հետ չեն կրնար համաձայնիլ կտակեալ դրամոց գործածութեան եղանակին վերայ, քանի որ, ըմ՛բէ, բարերարին այս հիմնարկած լուսոյ տաճարէն քառորդ դարէ մ'ի վեր գոնէ մէկ հատիկ շրջանաւարտ չէ տեսնուած:

Նամակիս այս մասէն գոհ եղաք թէ չէ, ան ձեր գիտնալիքն է: Հիմա ձեզ ցոյց պալ կ'ուզեմ մեր եկեղեցին: Ո՞բարեպաշտ և բարեպաշտուհի հայ քրիստոնեայ ընթերցողք «Հայք»ի, պատմութեանս ալէկ միտ դրէք: Ժամանակաւ, այսինքն Իզմիրլեան Սրբազանի առաջնորդութեան երկրորդ տարին, Թոփալեան մականունով Հայ մը կը մեռնի. ննջեցեալն եկեղեցի կը տարուի, անկէ ալ առօք փառօք գէպ ի գերեզման: Հետեւեալ օրը տեղական լրագրոյ մէջ հայ գոյթակոնութեան և ի մասնաւորի հայ երեւելեաց գէմ կծու քննադատութիւններ կ'երևին սա իմաստով — Ո՞ր է Հայոց ազգային եկեղեցասիրութիւնը. Միթէ կը վայլէ՞ որ ընկերային ա մենաբարձր աստիճանները վրայ փայլող Հայք, միջազգային յարաճուն կնճիռներու մէջ տարուբերող երկրի մը ճակատագիրը վարող Հայք՝ այսպիսի անշուք և անպարդ եկեղեցի մ'ունենան, փլփլած պատերով, ջարդ ու փշուր պատուհաններով, ծուլիկ ծուլիկ փոխթի կտորներով...— Երնե՛կ հոգւոյդ, Թոփալեան: Օր մը վերջ հայ երեւելիք հաւաքում մը կ'ունենան առաջնորդարանին մէջ, ուր գրեթէ առանց վիճաբանութեան, կ'որոշեն եկեղեցին վերաշինել հանդերձ շրջակայիւք: Առաջս կը վճռեն ատենօք հայ բարերարուհւոյ մը կտակած գումարին մէկ մասը եկեղեցւոյ վերաշինութեան գործին յատկացնել: Այսպէս կանոնեալ կառուցուեցաւ Պէն—էլ—Սուրէնի նեղ ու երկարաձիգ չղթային արեւելակողման վրայ կեցող պարզ այլ սիրուն և կոկիկ Հայոց Ս. Եկեղեցին:

Ս. Եկեղեցիէն վերջ Ս. առաջնորդի վրայ խօսիլ շատ բնական է բայց շատ դիւրին չէ: Գեր. Գէորգ Ծ. Վարդապետ Իւթիճեանի ընտրութիւնն, յուսալնորդութիւն վիճակիս՝ կը յիշէք անշուշտ թէ որպիսի պայքարներու և յուզմանց, Նար-Պէյ Սրբազանի թեր և դէմ շարժումներու հետեւանօք կատարուեցաւ: Այդ պարագայք, նաև ամենց չհասատատուած այն կարծիքն թէ Կարնոյ կառավարն Գեր. Իւթիճեան սրբազանի անխարհուրդ ընթացից հետեւանօք եղած է, այնպէս ըրած են որ ահագին ժողովրդականութիւն չվայելէր նորին գերապատուութիւն: Ինչո՞ւ, կը հարցնեն շատեր, առաջնորդն իւր ակներև բացակայութեամբ վայելեցաւ Բարձ. Խալիֆ Թէվֆիք փաշայի յաւղարկարութեան հանդիսին մէջ.— վասն զի ինքն նոյն օրն յԱղէքսանդրիա կը գանուէր.— բայց չէ՞ որ նոյն օրը բազմաթիւ ականաւոր անձանց հետ Ցունաց և Բաղդէացւոց երկրքին պատրիարքունք ևս Ազէքսանդրիան եկած, թափորին մասնակցեցան և իրենց հօտերն արժանապէս ներ կայացուցին: Ամենք այս պարագան տարի բռնկուած հանրաղրութիւն մը պատրաստեցին նորա դէմ, որ սակայն անհետ եղաւ...:

Քանի որ առաջնորդարանի շուրջն կը դեգերինք, թող ներուի մեզ յիշել Գեր. առաջնորդ հօր նախագահութեամբ և ազգային ժողովոյ Վսեմ. ատենապետ Ակրօ Տիդրան փաշայի ներկայութեամբ անցնալ շարթուն հոն կատարուած արտակարգ նիստն: Մենք Ծրագիր մ'ուներնք վէճերու արժանացած և յիշատակութեան արժանի: Նախորդ առաջնորդ Գեր. Իզմիրլեան Սրբազան իր անձնական փորձով համոզուած լինելով որ Եգիպտոսի վիճակը սահմանադրապէս կառավարել եթէ ոչ անհնարին գէթ շատ դժուարին է, միջամտրի պահանջմանց յարմարցուած վարչական ձեւի մը տարերքն յօրինած էր, զորոյ ասա, պատրիարքարանէն ալ վաւերացուելէ և ծրագիր անուամբ մկրտուելէ զկնի, գործադրութիւնն կտակած էր ապագայ առաջնորդին Ուրեմն երկու տարուան խնդիր մ'է Ծրագրի խնդիրն: Սահմանադրակա՞ն ձեւն աւելի օգտակար է մեզ թէ այս ծրագիր.—Սահմանադրականը՝ կը պատասխանէ ժողովուրդը. 30 տարուան հնութիւն ունեցող ձեւն միթէ մէկէն ի մէկ կը զոհուի՞ նոր չփորձուած ծրագրոյ մը: Բայց այս առարկութիւնք հիմակ, նոր առաջնորդին օրովն է որ կը լինին: Երկու տարի շարունակ ո՛չ ծրագիր ոչ ալ մրագիր գործադրուեցաւ, օր մ'ալ դացող հարցնող չեղաւ թէ ազգային կալուածք լաւ կը մաատակարարուի՞ն, դպրոցը կը յառաջդիմէ՞: Ըսէք, ընթերցողք, նմանութիւն մը չէ՞ք տեսներ մեր և բնական կլիմաներու ներքև ապրող տեսակ մը տարածոց միջև, որոնք տարբոյն կէսն քնէութեամբ կէսն ալ արթնութեամբ կ'անցուցնեն, սա տարբերութեամբ որ մեր քնէութիւնը առաջնորդ չեղած ժամանակին տեւողութեան չափ կ'երկարի երբեմն. Անցեալ շաբթու արտաքոյ կարգի նիստը ի գէպ ժամուս կուգար վերջապէս լուծել սա խնդիրը թէ իր ազգային պարտուց և իրաւանց տէր լինելու կիսակցութիւնն ունի՞ Եգիպտոսի հայ ժողովուրդը: Եւ գի անցեալ ժամանակաց փորձառութիւնք գրթիկան ապացոյց մը չէին ցոյց տար լուծելու համար այդ կարևոր հարց, որոշուեցաւ վերջապէս ի գործադրութիւն դնել Իզմիրլեան ծրագիրը, որ այժմ, շնորհիւ Կարապետ էֆ. Շէրիմանեանի, անհատնելի բարեփոխուելէ զկնի, ի նորոյ ընտրելի քաղաքական ժողովոյ արամադրութեան ներքև տիրի դրուի: Փափաքելի է յուսալ որ ընդ փոյթ կը վարուի այսպէսով այն խոր վիհը զոր Իզմիրլեանի ծրագիրը բացած էր ընդ մէջ ժողովրդեան և ազգային պաշտօնէութեանն:

Պատյտ մ՚ալ մեր վարժարանի շուրջը. եթէ կը հաճիք, և ապա բաժնուինք։

Մեր վարժարանին յատուկ եղող օդերեւութաբանութեան օրինաց համեմատ՝ երկաթ ուսանողաց թիւը 40 էն 60 բարեխառնութեան մէջ կը տարուբերի, ժամեռ եղանակին հասնելով իւր բարձրագոյն աստիճանին։ Անգամ մը որ օդերը մեղմանան և տոյաք իրենց փողոցային սանձարձակ կեանքը վերսկսելու կարող լինին, ալ դուք՝ եթէ աչքերնիդ կը զօրէ՝ չափեցէք այն անջը պեռը որ աշակերտաց և նստարաններու միջև բացուած է։ Մեր վարժարանին չէ կրցած տրուիլ դեռ այն մեծ նշանակութիւն — և այս ի հեճուկս հոգաբարձուաց անդուլ ջանքերուն— որով ծնողք ըմբռնէին թէ այդ յարկը անառակ որդւոց զգաստարան մ՚ըլլալէ աւելի՝ բանիբուն և պարկեշտ քաղաքացիներ հասցնելու սրբավայր մ՚է։ Դասատուք որք թուով հինգ են, իբրև առօրեայ կարգախօս կը կրկնեն այն մի և նոյն ութիւններն զորս աշակերտք նախնթաց դասերուն մէջ լսած, գոց ըրած, այլ և աւելցնելիք կամ պակսեցնելիք բան մը չունին։ Սիրելի է յուսալ թէ գոնէ այս վերջին ուսումնական խորհուրդը որ 6 ամիսէ ի վեր ընտրուած է, և որ եթէ ոչ բնռին բուն նշանակութեամբը ուսումնական այլ գէթ աշխատասէր և ուսումնասէր տարրերէ կը բաղկանայ, պիտի յօժարի մէկ քանի բանիբուն անդամներ ևս ընդունիլ իր հետ, որպէս զի ապագային կարենայ պատուաբեր պատասխանատուութեամբ մը իր հրաժարականը մատուցանել։

Տեղւոյս Նորակազմ Ընթերցասիրաց Ընկերութիւնը կը խոստանայ լաւ ապագայ։ Սուղ ժամանակի մէջ յաջողած է բաւական դրամ ձեռք բերել, այնպէս որ պիտի կարենամ քիչ ատենէն աւետել Գահիրէի Հայոց ընթերցարանի բացումը։ Ուրախալի լուր մ՚ալ այն է որ բարձր դատակարգի ազգայինք ոմանք հայերէն լրագիր մը հրատարակելու գեղեցիկ խորհուրդն յղացած են. դեռ յայտնի չէ թէ ձեռնարկուք ինչ ուղղութեամբ և ծրագրով պիտի հրատարակեն զայն, բայց սա չափն յայտնի կը զրուցուի թէ լրագիրը պիտի ըլլայ պահպանողական, նուիրուած սոսկ ազգային տեղական պէտքերու։

Վերջնապէս ուրախ եմք յայտնելու որ «Հայք»ի պաշտպանած միութեան ինդիրը ժողովրդեան ամեն խաւերուն մէջ համակրանք գտած է, և վստահ եմ թէ երբ առիթ ներկայանայ, հոս ալ պիտի գտնուին բաղմաթիւ Հայեր յօժար աջակցելու գործնականութեան դնելու համար կեդրոնացման գաղափարը։

ԵՐԱՐԱԿ ՅՈՐԵՒԵԼԻՑ

Փետր. 29 թուով մեզ ուղղեալ արևելեան նամակէ մի հետևեալ կտորն կը հրատարակեմք։—

Անցեալ տարի Հայր Ղեւոնդ Ալիշանի յոբելեանն տօնելու առթիւ Պոլսոյ հայութիւնն ուզեր է նուէր մի յղել իրեն ի յիշատակ մեծ հանդիսին և իւր երախտագիտութեան։ Հանգանակութիւն մ՚ըրեր և որուշեր են յանձնախմբոյ մը միջոցաւ իրկել յարգի քարի վրայ քանդակուած մէկ կոնգն իւր պատկերն և մեռս կողմը յոբելեանին թուականն, և այս ամենն քնարի մէջ կախուած։ Բայց ինչ ինչ պատճառներով մինչև ցարդ չէր ղրկուած։

Այս օրերս յարմար անձի մը առժամանակեայ կերպով մեկնելուն առթիւ, փութացած են անոր յանձնել յիշատակն, և յիշեալ ազգային արդարև շատ մեծարանօք ընդունուեր է Վենետիկի պատ. միաբանութենէն, վարժրանն այցելեր է, և քահանայի մը առաջնորդութեամբ տարուեր է Ս. Ղազարու վանքն։ Հոն վեհ ծերունւոյն ներկայանալով աչն համբուրած և նուէրն ձօնած է, յայտնելով թէ քաղաքական դժուարութիւններ պատճառ եղած էին յապաղմանն։ Հայր Ալիշան նուիրած է պատգամաւորին իւր «Այրարատ» անուն հոյակապ գործն, իւրագիր մէկ ձօնով մը ի ճակատուն, հանդերձ իւր լուսանկար մէկ պատկերով, որ կը կրէ իւր սառրագրութիւն։ Հետևեալ կիրակի օրն ալ ճաշի հրաւիրուած է, և շատ հաճելի օր մ՚անցուցեալ է յեռոյ մեկնած է։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ

(Շար. Տես Թիւ 4 5 և 6)

4

ԿԱՐԵՒՈՐ ԴԻՐՔ ՈՒՆԵՑՈՂ ՊԱՇՏՕՆԵԱՑՔ

Ամերիկայի Հայ գաղթականաց մէջ չեն պակսիր բոլորովին բարոյական կամ իմացական կարգի գործերով զբաղեալներ, կարեւոր և պատասխանատու դիրքերու բարձրացած անձինք որք պատիւ կը բերեն հայ մտաց։

Պէյլիքճեան Մարգար 1864ին ատեններն Ամերիկա եկած և յեռոյ Կ. Պոլիս վերադառնալով անդ դեղագործութեամբ զբաղած էր բաւական տարիներ։ Մի քանի տարի է որ Օսմանեան մայրաքաղաքէն հեռացած է ոտից փոշին թոթվելով և ընտանեօք եկած հաստատուած է յԱմերիկա։ Ինքն այժմիկ կարեւոր գործանոցի մի թոշակաւոր տարրաբանն է, և մի քանի գիւտեր ըրած է։

Ա. Գ. Աստիկեան երկրագործական վարժարանի մէջ ուսումն աւարտելէ յետոյ մասնաւոր ագարակաց մէջ ևս գործնական փորձառութիւն ստացած, յետոյ «Ուալլէյսըս Մընթլի» կոչուած գիտական լրագրին աշխատակցած և վերջապէս, այն է 1890ին պաշտօնի կոչուած է Միացեալ Նահանգաց Երկրագործական Շրջանակին սէջ ի Ուօշինկթըն։ Աստիկեանի մասնագիտութիւնն է ձիու, արջառի, ոչխարի, խոզի, հաւու զարգացումն, և իւր այժմու պաշտօնն կենդանական ճարտարարուեստութեան Պիւռոյին մէջ է։

Յովհաննէս Տիանեան 1884 էն ի վեր Նիւ Եորքի կարեւոր մէկ պանդոյին մէջ դրամընկալի կարեւոր պաշտօնն կը կատարէ։

Անդրանիկ Այվազեան որ Պոլսոյ մէջ երկար տարիներ «Աւետաբերի» խմբագրութեան կ՚աշխատակցէր իբրև հայագէտ և տաճկագէտ, եկաւ Ամերիկայ 1884ին և բժշկութիւն ուսանելէ յետոյ քաղաքային բժիշկի պաշտօնին հասաւ, և Նիւ Եորքի մէջ չորս — հինգ տարիներէ ի վեր այդ պաշտօն կը շարունակէ յաջողութեամբ։

Յովհաննէս Արշակունի, նախկին երեւելի Ազգ. Ժողովոյ, նոյնպէս իւր բժշկական ուսմանց ընթացքն աւարտած՝ ատմանակէ մ՚ի վեր Ուօրտս Այլէնսի Նմանաբուժական Հիւանդանոցին մէջ վիրաբուժի և ախտաբուժի պաշտօնն կը վարէ իբրև ներքին։

Որքան որ գիտեմք, այս երկուքէն զատ ուրիշ հայ բժիշկներ չկան այժմ հանրային պաշտօն վարող Միացեալ Նահանգաց մէջ։ Իսկ անկախօրէն բժշկութեամբ զբաղող կամ զբաղելու սկսող բժիշկներ Նիւ Եորքի և Պրուքլինի մեջ են 5 կամ 6 ընդամենայն։ Ուսթերի մէջ կայ միայն մէկ հայ բժիշկ —Սէրիճանեան, և Ֆիլատէլֆիոյ մէջ կայ ևս հայ բժիշկ Քէպապեան։

Մանկասար Մանկասարեան, որ աստուածաբանական ուսմունք առնլէ յետոյ երէց կարգեալ էր բողոքական եկեղեցւոյ մի վերայ, ի Ֆիլատէլֆիա, թողուց զբ բիսոնէական քարոզութեան բեմն և ագիտականութեան (agnosticisme) յարեցաւ։ Իբր երեք տարի Նիւ Եորքի Էթիքըլ Քըլէբը Սօսայթիին մէջ (Բարոյական Մշակութեան Ընկերութիւն) իբրև բարոյախօս պաշտօն վարեց և ժողովրդական օժանդակն հանդիսացաւ նոյն ընկերութեան աւագ ատենախօսին՝ Ատլէրի։ Մի քանի ամսէ ի վեր Մանկասարեան ի Շիքակօ կը գործէ նոյնպիսի ընկերութեան մի մէջ մի և նոյն պաշտօնով։ Ինքն քաջ անգլիերէն կը խօսի և ընտիր առոգան է, շնորհալի են իւր ճարտասանական շարժմունք և վայելուչ են իւր բացատրութեան ձեւք։ Ամերիկացի լաւ հրապարա-

կախօսներու հետ կրնայ համարձակօրէն բաղդատուիլ Մանկասարեան։

Մանաւէ Փափազեան Նիւ Հէյվընի մէջ աստուածաբանական ուսմանց ընթացքն աւարտելէ յետոյ՝ ուսաւ նաև Անտովերի մէջ, և երկու տարիէ ի վեր Մասաչուսէցի մէջ ամերիկեան եկեղեցւոյ մի երէցն է։ Քիչ Ամերիկացի քարոզիչներ կարող են անգղիերէն լեզուն գործածել որպիսի ճարտարութեամբ կը գործածէ զայն մեր հայրենակիցն, և աւելի՛ քիչեր կարող են խորհրդոց այն ճոխութիւն և խորութիւն դնել քարոզներու մէջ զոր կը դնէ այս Հայն։ Ամերիկացիք իրենց ոգանշացման մէջ յառաջ գնացին մինչեւ կոչել զնա լրագրի մէջ նոր սմն Պիչըր։ Փափազեան պերճախօս է բառին ճշմարիտ նշանակութեամբն։ Իւր ուկնդիրներն և Ամերիկեան քաղաքականութիւնն գովելով չէ որ ժողովրդական և յարգելի եղած է այս օտարականն, այլ ի հար կին անաչառ յանդիմանութեամբ հարուածելով իսկ զԱմերիկան ու զամերիկեանն։

Հ. Պրո-Նալէլ

(«ԱՐՁԱԳԱՆՔԻՆ» Կ'ԱՐՏԱՏՊԵՄՔ ՀԵՏԵԻԵԱԼՆ)

Նիւ Եորք 2 Փետր. 1892

«Արձագանք»ի 45դ թուին մէջ «Արուեստ Ատենախօսութեան» գրքին վերայ Ձեր համառօտ մատենախօսութիւն կ'աւարտի սա դիտողութեամբ... «Հայն ամեն կլիմայի և ամեն քաղաքակրթութեան համակերպուել կարող է, որովհետև հազիւ թէ մի տասնեակ տարի է որ հայ դպրիչներ կան Ամերիկայում, և ահա նըրանք կարիք են զգացել ամերիկական ձևով կրթուած հռետորների»։

Թոյլ տուէք, Տէր, դիտել տալ թէ «Արուեստ Ատենախօսութեան» գործոյս նպատակն չէ ամերիկեան ձևով հռետորներ հասցնել՝ այն պարզ պատճառով զի ատենախօսութեան Ամերիկայի յատուկ ձև կամ դրութիւն չկայ։

Մեր երկասիրութեան մէջ բացատրուած ատենախօսական սկզբունքներն բովանդակ քաղաքակիրթ աշխարհի մէջ ընդունուած սկզբունքներ են, որոնց համաձայն Եւրոպայում և Ամերիկայում կը կրթուին ուսանողք։

Եթէ կայ հեղինակ մի որմէ մասնաւորապէս ներշնչեալ եմ, այն ալ Լըկուվէ (Legouve) է, Ֆրանսացի վարպետն ատենախօսութեան։

Նաև իդէպ է պարզել աստ թէ մեր գրքի նպատակն չէ ուսուցանել վայելուչ և աղդու սճով բացատրելու արուեստն, որ է ծարտասանութիւն կամ Ռէթորիք կոչուածն, այլ ուսուցանել թէ արդէն պատրաստուած բանն — քարոզ, ճառ, դաս, առակ, բանաստեղծութիւն, պատմութիւն, ողբերգութիւն, կատակերգութիւն— ի՞նչպէս պարտէ արտասանել։

Ի հարկէ գէշ գրուած կամ պատրաստուած բանն յարմարութիւն չունի լաւ արտասանուելու. բայց և որքան ընտիր բաներ գէշ կ'արտասանուին ամեն օր և այն ալ ուսեալ մարդոց շրթունքներէն։

Եւրոպացիք զայս շատոնց տեսած են, և ուստի լաւ արտասանութիւնն որ առաջ ճարտասանութեան մասն համարուելով բարձր կարգի ուսանողաց միայն վերապահեալ էր, առանձին ճիւղ մ'ըրին Elucution անուան ներքեւ —որոյ ճշգրիտ համապատասխան հայերէնն է առոգանութիւն — և զարդիս հասարակ կրթութեան անհրաժեշտ տարրներէն մին է այն հանրային վարժարանաց մէջ։ Փարիզում տեսած եմ նոյն իսկ գիշերային յատուկ վարժարաններ՝ պատանեաց առոգանութեան դասեր ձրի աւանդելու համար բացուած։

Մեր մէջ առոգանութեան արուեստին վերայ խօսող առաջին երկասիրութիւնն պարտ էր արժանանալ անմիջական ուշին ուսուցչաց, վարդապետաց և դերասանաց։ Զարմանք է եթէ դէթ Էջմիածնի, Արմաշու և Երուսաղէմի հոգեւորական վարժարանաց մէջ այսպիսի դասագրքի մի պէտքն զգալի եղած չէ։

Առոգանութեան արուեստին հմուտ լինել կարեւոր է նաև ամեն ուսեալ և մշակեալ անհատի, որ կըրնայ առիթ ունենալ հրապարակաւ խօսելու ազգային և դպրոցական հանդէսներու կամ բանախօսելոյ լսարանաց մէջ։ Հմտութեան մի և նոյն աստիճանն ունեցող երկու հրապարակախօսներու մէջէն այն որ առոգանելու վարպետ է, աւելի խորին և անընդհատ ուշադրութիւն կը դրաւէ, որով և աւելի օգտակար և միանգամայն աւելի հաճելի կը հանդիսանայ։

Ժողովրդեան այն մասն որ ընթեռնուլ չսիրեր, և այն մասն իսկ որ կարդալ չգիտէ, աւելի ախորժով միտ կը դնեն կենդանի բարբառով հմտութեամբ տրուած բանախօսութեան մի, այնպէս որ խօսելու արուեստին շնորհիւ կարող կը լինին գործիչք լոյս թափանցել աւելի խոր և ցած խաւերու մէջ քան գրոց և թերթերու միջոցաւ։

Նաև օրիորդներու և երիտասարդներու ակումբներ կրնան կազմուիլ նման այնմ որ վերջերս գոյութիւն առած է Տփղիսում, և անդ կրնան ընտիր մատենագիրներէ զանազան հատուածներ արտասանել, ինչ որ հրահանգիչ և գրօսալի միանգամայն կը լինի մանաւանդ այն ապայմանաւ որ առոգանութեան արուեստին ուշ դնեն։

Մեր ազգին մէջ լեգէոն են բարձր և բազմակողմանի ուսումնականութեան հասած մարդիկ, նշանաւոր գրագէտներ և գրողներ, բայց գերազանց խօսողներ, վարպետ առոգաններ եթէ կան, են կարի սակաւաթիւ։

Ինչո՞ւ չգտնուին սակայն առաջնակարգ պերճախօսներ այն ազգին մէջ, որ ծնունդ տուաւ Պարոյրի, (Պրոմեթեոսի), այն Հայուն, զոր Աթէնք և Հռովմ, Պոնտոս, Բիւզանիա և Պամփիլիա, Եգիպտոս և Լիբիա համաձայն հռչակեցին իբրև առաջնակարգ պերճախօս, և որոյ ի պատիւ ամբողջ անդրի մի վանգնեց Հռովմ սա արձանագրութեամբ.

ԹԱԳՈՒՀԻՆ ՀՌՈՎՄ ԹԱԳԱՒՈՐԻ ԲԱՆԻՆ

Ճշմարտութիւնն զօրութիւն և կեանք է, բայց պէտք է գիտնալ զայն ազդուապէս բացատրել։ Կարելի է զճշմանտութիւն բացատրել գրելով, նկարելով, երաժշտելով և խօսելով։ Այս հինգ միջոցներուն մէջ հըզօրագոյնն է խօսքն, բանն։

Թող և ի մեզ յառնեն մարդիկ որք իմաստի, ոճոյ և առոգանութեան բարձրագոյն ձևերն բարդեալ, խնամեցեալ ներկայացուցեն ժողովրդեան. և հրաչքներ պիտի գործուին։

Հաճեցէք, Ազնիւ պաշտօնակից, ընդունիլ խորին յարգանքներս։

Խմբագիր հրատարակիչ՝
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ, ի պէտս Ազգ. Վարժարանաց. գրեաց Մ. Ս. Գաբրիէլեան, 1891՝ 128 էջ, գին մէկ թալէռ կամ հինգ Ֆրանք։ Եթէ վարժարանաց մէջ իբրեւ դասագիրք գործածելու համար ուզուին բազմաթիւ օրինակներ միանգամաւ հարիւրին յիսուն զեղչ կը լինի։

ՅՕՂ ԵՒ ՅՕՂՐ

ԲԱՂԱԲԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՆԴԷՍ Զ. ՏԱՐԵԴԱՐՁԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Շաբաթ երեկոյ, 2 Ապրիլի,
ի թ. 161 8դ Էվինիւ

Հինգ տեսակ նուագ, առանձին և խմբով. Ճառախօսութիւն. Հանգիսերէն առոգանութիւնք. և թատերական ներկայացում։

Հանդէսն պիտի սկսի ժամ ութին ճիշդ։

Բոլոր Նիւ Եորքի և շրջակայից Հայեր, Տեարք և Տիկնայք հանդերձ զաւակօք կը հրաւիրուին ներկայանալ։

Կերեւի ասուգիւ, կ'ըսէ Հէրալտ, թէ Արևելեան Հնդիրն Պուլկարիայէն, Սերվիայէն, Ռումանիայէն, Ալպանիայէն և բովանդակ պալքանեան թերակղզիէն վերջապէս փոխադրուած է յՈսկեղջիւր և անտի ի Գահիրէ, յԱղէքսանդրիա, ի Զրանցս Սիւէզի, ի Կարմիր Ծով, ի Տանկոլա և յերկիրն Փարաւոնից։ Ինն անգղիական զրահաւորաց 3,400 որերով ներկայութիւնն յԱղէքսանդրիա է ստուգիւ նաւային ցոյց մի Եգիպտոսի ժողովեղեան՝ առ ի չէզոքացուցանել Սուլթանի հրովարտակին ազդեցութիւնն որ կը պահպանէ Բ. Դրան վերապետական իրաւունքը ի վերայ Եգիպտոսի։ Նոյն ատեն բրիտանական նաւատորմ մի կը հսկէ Կարմիր Ծովուն վերայ։

Ասոնցմէ պարզ կը տեսնուի թէ Անգղիա մեծ աշխուժիւ կը շարունակէ զՆեգիպտոս իւրացնելու գործն։

Նիւ Եորք Բիւրոյի մէջ կը կարդամք.— Սուլթանի կ'նայ դէմ կարծեցեալ դաւադրութեան մի երևան հանուելովն մեծ յուզում կայ Պոլսոյ մէջ։..... Եըլտըզի արքունիքն, ուր Սուլթան կը բնակի, այնքան ընդարձակ է որ կրնայ յաւէտ քաղաք կոչուիլ քան պարանք։ Սուլթան Մահմուտ չինեց զայն Զինկեանէ կնկան մի համար որոյ վերայ խորապէս կը սքանչանար։ Առաւել քան 300 կանայք կը վայելեն Սուլթանին վերաբերելու պատիւն, և ունին 1200 սպասուհիներ ի ծառայութեան։ Սուլթանն շատ կը խիթայ ոստիկանական դաշէ և սակայն հակառակ իւր ջղային և դիւրայոյզ լինելուն, երկչոտ ոք չէ։ Անձնապէս քաղցրաբարոյ և հեզհամբոյր է, և կը գանի մահու պատիժէ։ Իւր դէմքերք յոյժ սիրելի են իրեն, և դաշնամուր ածելով կը զուարթացուցանեն զաղաղակացեալ հայրիկ։ Փաշիշահն առուստուն վաղ կը յառնէ յանկողնոյ, և իւր առաջին գործն է աչքէ անցուցանել եւրոպական և օսմանեան գլխաւոր լրաթերթերն։ Ժամ 10ին կը կոչէ իւր սենեկապետներ, զՀաֆի Ալի Պէյ և զԷմին Պէյ։ Այս վերջինս ներկուտ է եւրոպական լեզուաց և քաղաքականութեան։ Սուրէյա փաշա Սուլթանին աջ բազուկն է և առաջին քարտուղարի պաշտօնն կը վարէ։ Օսմանցւոց զինուորական կազմակերպութեան մասնագէտն կը համարուի սա, և նշանաւոր ելմտադէտ։ Ապտիլ—Համիտ ունի նաև Փռանսացի խոհարարապետ մի, և եւրոպայի լաւագոյն գիներն եւրոպացի հրաւիրելոց համար. երբ բաժակ առաջարկուի դիւանագիտական մարմնոյ ընթրեաց մէջ, մահմետական կոչնականք քիչ մի ջուր ըմպելով կ'ընկերանան եւրոպացւոց։ Սուլթանի ընտանեկան ծախքն է տարին 40 միլիոն թալէր։

Տր. Սէրիֆանեան կը գրէ Վուսթըրէն.— «Թուէս երկու օր առաջ, այն է մարտ 17 ին, Կեսարացի Ռուբէն Յակոբեան անուն երիտասարդը, իբր 24 տարեկան, դժբաղդ արկածի մի զոհ գնաց Շեյքի գործարանի մէջ ուր կը գործէր յիշեալը։ Մաքենային Պելթը ինկած ըլլալով՝ երբ կրկին մաքենային վերայ դնելու կը փորձէր թեւին հանդերձը Պելթին տակը կը մնայ և հետը դառնալ կը սկսի. մաքենային դարնուելով դարնուելով գան կին առջևի սոկորն կը ջախջախուի և երևան ելլուելու կը լինի։ Հիւանդանոց փոխադրուելէն 4 ժամ վերջ հոգին կ'աւանդէ մեր հէք հայրենակիցն, և անկէ Մօրկ կը տարուի։ Գնացի հոն տեսայ դիակն, և սիրտս ճմլուեցաւ։

Տիար Կեօլճիքլի կը գրէ Ֆիչպուրկէն Մարտ 28ին — Հոս Մարտ չորս ին յանկարծամահ եղաւ Կարապետ Սէֆէրեան Խարբերդցի 21 տարեկան երիտասարդը։ Հինգ բժիշկներու քննութիւնք ապացուցին թէ սրտի ցաւէ մեռած է։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՄԱՐՏ 19Ի ՆԻՍՏՆ

Հայկ. Միութեան 135դ նստին մէջ Տր. Յովհաննէս Արշակունի երկար և ուշադրաւ ճառ մի կարդաց Հայկ. Խնդրոյ և հայ յեղափոխականաց վերայ։ Ցուցուց թէ պուլկարական յեղափոխութիւնն ինչ յարաբերութիւն ունեցած էր ոչ—պուլկարական շահերու հետ։ Բացատրեց Ռուսիոյ, Պարսկաստանի և Անգղիոյ քաղաքականութիւնն Հայոց վերաբերութեամբ։ Ընթերցաւ հայ յեղափոխականաց սմանց նամակներն, առանց երբէք անունն տալու, և պատմեց ինչ ինչ այլանդակ դրոյցներ և պարպամիտ դուշակութիւններ խաբող կամ խաբուած անձանց կողմանէ շշնչուած, որք ի հարկէ իրացած չէին։ Արտաքին օգնութեան յոյս միայն Անգղիոյ կողմէն կրնանք ունենալ, ըսաւ, եթէ քաղաքական պարագայք այնպէս բերեն։ Ներսէս պատրիարք բոլորովին հեռի էր յեղափոխական խորհուրդներէ, և մեք, ասաց իբրև եզրակացութիւն. ի սպառ հրաժարելով յեղափոխական ձգտումներէ պարտիմք դիւանագիտական միջոցներով մեր փատան յառաջ տանել՝ կռթնելով 61դ յօդուածին։

Տր. Այվազեան ասաց թէ ինքն յեղափոխական չէ, բայց կը բաղձայ որ հայ գիւղացին քիչ մ'աւելի արիական դիմադրութիւն ընծայէ հարստահարիչ Քրդերուն։

Տր. Գարբիէլեան արդար չհամարեցաւ դատապարտել յեղափոխութիւնն սկզբամբ՝ անոր համար որ անբարեխիղճ կամ տգիտամիտ կամ կատաղի յեղափոխականներ եղած են և կրնան լինիլ։ Հայոց ուժերուն վերայ չափուած համեստ յեղափոխութիւն մ'է այն զոր բոյ չափուած համեստ յեղափոխութիւն մ'է այն զոր գործիչք կը ջատագովեն կամ կարդարացուցեն, և զգօն գործիչք կը ջատագովեն կամ կարդարացուցեն, և զոր ինչ ինչ պատահականութիւնք կրնան մինչեւ անգամ հարկաւոր գործել։

Տի. Տիոնեան ի մէջ բերաւ ինչ որ անգղիացի բարձրագիր պաշտօնեայ մի ըսած է — թէ վերջին ռուս և թուրք պատերազմին ատեն Հայոց յեղափոխական մէկ շարժումն կրնար ծառայել Հայկական խնդրոյ բարւոք լուծման։

Տի. Իկինեան յիշեցուց թէ բարձրաստիճան հայ եկեղեցական մ'եւս հրապարակաւ բացատրած է երկաթեայ գործիներու ազդեցութիւնն։

Տի. Այվատեան շեշտեց հանրային կարծիքն շահելու պէտքն։

Տի. Պոնտիարթեան օրինակաւ մի բացատրեց թէ որքան հարկաւոր է Տաճկահայոց ղէնք գործածել գիտնալ։

Տի. Թաւշանճեան ինքզինք յատարարեց լինիլ ոչ—յեղափոխական, բայց ընդունեց թէ բուռն միջոցներու հանդիպելով հարստահարիչք աւելի զգուշաւոր կը լինին։

ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ Ի ՆԻՒ ԵՈՐՔ

Յայտնի է թէ տարի մ'առաջ ջանքեր եղան Նիւ Եորքի մէջ հոգեւոր պաշտօն կատարել ըստ Հայաստանեայց Եկեղեցւոյ, և նոյն ատեն կազմուեցաւ հոգաբարձութիւն մի, որ դիմելով Եպիսկոպոսականաց Նիւ Եորքի թեմին եպիսկոպոսին, արտօնութիւն ստացաւ գործածել Ս. Յովհաննու Ոսկեբերանի եկեղեցին (յանկեան Եօթներորդ Էվինիւի և 39դ Փողոցի)՝ ամեն կիրակի ժամ մէկ ու կիսուն, յետ միջաւուր:

Այն ատեն կազմուեցաւ դպրաց դաս մի, և քանի մ'անգամ ալ Արժ. Յովսէփ Վ. Սարաճեան, Ամերիկայի Հայոց հովիւն, եկաւ Ս. պատարագ մատուցանել ի միխիթարութիւն հաւատացելոց և մկրտել անկնունք մանուկներն:

Ի սկզբան այս շարժման Լուս. Հայեր բաւական թուով և եռանդեամբ ներկայ կը գտնուէին բայց ցաւով տեսնուեցաւ որ վերջին ատեններս եկեղեցի յաճախողներու թիւը կը նուազէր և հոգաբարձութեան անդամոց մէջ ալ անհամաձայնութիւն ծագած էր: Նախորդ հոգաբարձութեան պաշտօնի շրջանն լրացաւ մի քանի ամիս առաջ և խնդիր եղած էր թէ արժա՞ն էր նոր հոգաբարձուներ ընտրել և շարունակել պաշտամունքը: Երկու ընդհանուր ժողովներու մէջ Հայ եկեղեցւոյ զաւակունք այնքան եռանդ և փափաք ցուցին պաշտամանց շարունակութեան համար և յօժարութիւն յայտնեցին հարկաւոր ծախուց մասնակցելու որ յարմար դատուեցաւ նոր հոգաբարձութիւն ընտրել: Ընտրութիւնք կատարուեցան քուէարկութեամբ և ընտրուեցան Տեարք Կիւլպէնկեան, Այվազեան, Արշակունի և Այվասեան, նաեւ ուրիշ մին, որ ընտրուելէն վերջ քաղաքէն հեռացաւ:

Նորընտիր հոգաբարձութիւնն իւր պաշտօն ընդունելէ յառաջ հարկ դատեց բացատրել ժողովրդեան ամեն դժուարութիւն: Ժողովուրդն կրկնեց իւր փափաքն և խոստացաւ հակառակ ամենայն դժուարութեանց յարատեւել: Ասոր վրայ նորընտիր հոգաբարձութիւնն յանձն առաւ իւր պաշտօն առժամանակեայ կերպով և հարկաւոր եղած զանազան ծախքերն ապահովելու համար ձեռնարկեց հանդանակութեան մի, որ յաջողութեամբ կը շարունակուի:

ՇԻՐԱԿՈՑԷՆ ԿԸ ԳՐԷ ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑ

Հռովմայ Պապը օրհնութեան կոնդակաւ մը պատուեց Քոլոմպեան Ցուցահանդէսն յաջողութիւն և բարօրութիւն մաղթելով վասն հանդիսին, և կառավարութեան:

Հանդէսն և կիրակէն: Դեռ չլուծուած խնդիր մ'է թէ արդեօք ցուցավայրն բաց պիտի մնա՞յ հասարակութեան համար կիրակէ օրեր: Մ. Նահանգաց բողոքական յարանուանութիւնք գրեթէ ամենքն համամիտ են և պահանջող իսկ որ ցուցահանդէսն փակուի կիրակէ օրեր ֆիզիքական, բարոյական և կրօնական սեսակէտիւ: Հռովմէադաւանք առ հասարակ, անհատական բողոքականք և դրամաեարց շատերն կը փափաքին բաց տեսնել հանդէսն շաբաթն եօթն օր:

Գանատայէն խնդիր մատուցուած է գէթ փակել Գանատայի ցուցաբաժինն կիրակէ օրեր:

Եւրոպայի Կիրակնօրեայ Պահպանման Դաշնակցական միութիւնն, որոյ կեդրոնն Զուիցերիոյ Ժընէվ քաղաքն է, խնդրագրաւ մը այս օրեր դիմած է հանդիսին վարչութեան՝ յանուն Եւրոպիոյ եկեղեցեաց, և բանաւոր փաստեր յառաջ բերած է ի նպաստ կիրակնօրեայ պահպանման հանդիսին:

Խնդիրն դեռ լուծուած չէ: Սակայն կը կարծուի թէ խնդրոյն լուծումն մեծ կարեւորութիւն ունի գործաւորաց իրաւանց ճանաչման մասին, և յայտ կայ թէ մարդասէրք (philanthropist) ևս պիտի պնդեն կիրակնօրեայ պահպանումն:

Դամասկոսի վաճառականական տուն մը յաջողած է արտօնութիւն ձեռք բերել, որպէս զի ցուցահանդիսին մէջ ի ցոյց և ի վաճառ դնէ Արեւելեան նեղածեալ ապրանքներ: Արդեօք Հայ վաճառականք անկախաբար կամ միութեամբ չե՞ն կրնար արդար մրցում մ'ընել այսպիսի ձեռնարկի մէջ:

ԹՂԹԱԿԻՑ

... Խմբագիր,

Եթէ կը համիք, ձեր պատուական թերթին միջոցաւ կը ցանկամ կարծիքս յայտնել մէկ բաւական կարեւոր խնդրի մը վրայ:

Արդեօք Հայերս Հայոց վրայ խօսող յատուկ թերթ մը անգլիերէն լեզուով կրնա՞նք հրատարակել, և ատանկ թերթ մը Հայոց խնդիրը Ամերիկացւոց ծանօթացնելու կրնա՞ ծառայել: Ես կ'ըսեմ թէ չ'է, չկրնար:

Հասարակ Ամերիկացին արդէն իր սովորական թերթէն զատ թերթ ձեռք չառներ:

Ուսումնական, քաղաքագէտ կամ այդ կարգի Ամերիկացիներն ալ այնքան շատ և լաւ թերթեր ու հանդէսներ կ'առնեն որ անոնք կարդալու ժամանակ հազիւ կը գտնեն:

Մեր թերթն ալ աչքէ անցնելու համար իր սուղ ժամանակէն գողնալու է ատանկ մարդը, բայց տեսնենք թէ կ'ուզէ իր երկրին և իր գործերուն և շահերուն վենարերեալ լրագիրներուն ժամանակը զոհել ըստ մասին անանկ լրագիր մը կարդալու որ օտար շահերու և անծանօթ ժողովրդի վրայ կը խօսի: Մանաւանդ որ սա մարդիկը ճարտար և եփուն գրիչներէ ելած բաներ կարդալու սովորած են, և չեմ կարծեր թէ մեր լրագիրը սոսով և խորհրդով այնչափ բարձր ըլլայ որ ան աստիճան մարդիկը գոհ ընէ:

Եթէ իր դրչին վստահող մարդիկ ունինք մեր մէջ որ ազգասիրաբար կը ցանկան մեր դատը Ամերիկացւոց ճանչցնել, թող հրամեն Ամերիկացւոց լրագիրներուն յօդուած տան Հայոց վրայ: Իրենց յօդուածը ուրիշ խել մը լաւ յօդուածներու և Ամերիկացւոց վերաբերեալ խնդիրներու ընկերացած կ'երթայ ամեն տեղ կը մտնէ ամեն բարձր ու միջին շրջանները, և կարդացուելու բաղդին աւելի կրնայ արժանանալ, գոնէ յօդուածին խորագիրը կը կարդան և մեր անունը կը սովրին:

Բայց եթէ Ամերիկացւոց լրագիրներուն մէջ ընդունուելու արժանի յօդուածներ գրելու կարողութիւն չունի մէկը, և կելլէ ամբողջ լրագիր մը հանել Հայոց վրայ, շատ յիմարութիւն կ'ընէ. և մենք ալ շատ անխելքութիւն ըրած կըլլանք եթէ ատանկ ձեռնարկ մը պարապ տեղը քաջալերելով ինքզինքիս յոգնեցուցնենք:

Պրուքլին 25 Մարտ 1892 ՀԱՅԱՋԳԻ

Մեր թղթակիցը լաւ կ'անէր եթէ չմոռնար յիշել նաև մշակեալ դասուց գոհացում տալու ամեն պայման ունեցող թերթ մ'ունիմք անգլիերէն, Տի. Մ. Զերազի «Արմէնիա»ն, և եթէ կան Ամերիկացիներ որք կրնան Հայոց վրայ գրուած և լաւ գրուած թերթ մի աչքէ անցունել, չնչին յոդնութիւն մի յանձն առնլով կարող եմք 4—5 հարիւր օրինակ ամեն թիւէն բերել տալ և տարածել Ամերիկացւոց մէջ: Դիւրինը մոռցած եմք ու անհնարի՞ն փորձելու ետեւէ կ'իյնամք:

Նաև կ'ուզեմք դիտել տալ ուրիշ կէտ մի. Մեր անգլիերէն թերթը հազիւ 1000 կամ 2000 օրինակ վաճառնայ տպուիլ, բայց եթէ կարդացուելու արժանի յօդուածներ կարենանք հրատարակել Ամերիկացւոց թերթերու մէջ, հարիւր հազարաւոր օրինակ կը տպուին, և կարդացուելու պատահականութիւնն անհունս կ'աւելնայ:

ՓՈԽԱՆԱԿԱԳԻՐ

Թուրքիա դրամ ղրկելու համար ոչ մի տուն Ամերիկայի մէջ կրնայ տալ այնչափ դիւրութիւն և ներշնչել այնչափ վստահութիւն որչափ կուտայ Կիւլպէնկեան մեծ տունն որ ճիւղեր ունի Թուրքիոյ բոլոր կողմերն և Եւրոպիոյ նշանաւոր քաղաքաց մէջ։ Ամերիկաբնակ Հայք որ դրամ ղրկել կ'ուզեն ի Թուրքիա կրնան ամենայն վստահութեամբ դիմել առ Տի· Կիւլպէնկեան,

53 Cedar St. N.Y.

ԵՒՏԻՍ ՆԱՀԻԿԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել թէ երկար տարիներու փորձառութեան շնորհիւ ամենեն ապահով և աժան գներով փոխանակագիր տալ կարող է Խարբերդու և Պոլսոյ վրայ, և փարա կամ թիքէթ խրկել Մարսիլիա։

Ունի նաև ընծայի շատ յարմար Տաճկական Չինական, Հնդկական և Ճաբոնական ամեն տեսակ ապրանքներ։

Ծանօթութիւն.— Գործերնուս խաթրին համար ստիպուած չեմք մեր անունը կորսնցնել և օտար անուն մը կրել, մենք բուն Նահիկեան ենք։ Մեզ դրել հետեւեալ հասցէին

A. N. Nahikian, 39 Pleasant St. Worcester, Mass.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վենետիկի բազմարդիւն Միաբանութեան հետեւեալ երեք հրատարակութիւններն ստացանք շնորհակալութեամբ։

(1) ՅԱՓՇՏԱԿՈՒԹԻՒՆ հանդէպ ծովալճին Մօտապուռնուի.

Գրեց Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան. 65էջ։

(2) Ղազար Փարպեցի, ազգային ոսկեդարեան պատմչի Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան. Գ. տպագրութիւն, էջ 720.

(3) Լորա Պայրընի «Պանդխտութիւն Հարոլտայ Ասպետի կոչուած քերթուածներն։ Անդղիական բնագրին դէմ դրուած է հայերէն գրաբար թարգմանութիւնն էջ 148։

Շնորհակալութեամբ ստացանք նաև թատերական գրուած մի «Մուսայ Պէյ և իւր սարսափելի եղեռնագործութիւնք.» գործ Ասլղարիպի, տպեալ ի Ռուսչուք

— «ՀԱՅԿ»ի 1891 տարին ամբողջ կապուած կը ծախուի 2 թալէր 5 սէնթի։

Հետեւեալ գրքերն կրնաս գնուիլ, գինն կանխիկ վճարելով, «ՀԱՅԿ»ի խմբագրատնէն, 202w. 23d St.
New York

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ Գրեաց Մ. Սմբատ Գաբրիէլեան, 1888, (նախապէս հրատարակուած «Արեւելք»ի մէջ) 61 էջ. գինն է 20 սէնթ կամ մէկ ֆրանք։

LANTELME'S

HOTEL & RESTAURANT,

40 UNION SQUARE NEW YORK CITY

16 և 17 րդ փողոցներու միջև արեւելեան կողմն։

—Ընտիր Գաղղիական Խոհարարութիւն—

Նախաճաշ 40 և ճաշ 75 սէնթ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՐԳԱՐԵԱՆ

(Զափաւոր օրինակներ միայն տպեալ)

Սոյն Մարգարան 128 երեսներէ բաղկացեալ և 36 ձևերով բացատրեալ, ինքնուսուցիչ գրքոյկ մ'է գինուորական մարզանաց և մարտագիտական սկզբանց։

Գինն որևէ հասցէի համար մէկ թալէր կամ հինգ ֆրանք։ Վեց կամ աւելի օրինակներ գնողին, հարիւրին 25 զեղջ կը լինի։ Կրնայ ստացուիլ «ՀԱՅԿ»ի Խմբագրութենէն կամ ուղղակի հեղինակէն, հետեւեալ հասցէով,

G. Casbarian, Gen. P. O. Brooklyn, New York U. S. A.

MARK F. COSGROVE

ԿՈՇԻԿՆԵՐ, ՄՈՑԿԵՐ ԵՒ ԸԼՊՊԸՐՆԵՐ

78 Front St., Corn Bigelow Court
WORCESTER MASS.

Այս է ամենէն աղէկ խանութն Վուսթրի մէջ, ուր կրնաս գնել ամեն տեսակ կոշիկներ մոյկեր, և կոշիկի ըլպպըրներ։ Հրամէ եկուր անգամ մը և տես թէ ինտոր լաւ ընդունելութիւն կուտանք մեզ այցելող Հայերուն։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՁԱՅՆ ՄԻ ԱՐԱՐԱՏ ԼԵՌՆԷՆ, անգղիերէն տեսր մ'է 54 երեսներէ բաղկացեալ, որ կը պարունակէ հեղինակին - Տիար Միհրան Պաղտասարեանի - կենսագրութիւնն, Օսմանեան Պատմութեան վերայ ակնարկ մի և և Հայոց Պատմութեան բովանդակութիւն մի։ Տեսրին վերջին երեսներն նուիրեալ են Հայոց պէտքերն և բաղձանքն ցուցնելու։

Այս տեսր կը վաճառուի 50 սէնթի· դիմել հեղինակին հետեւեալ հասցէիս — Mr. M. Baghdasarian, 411 Walnut St. Des Moines Iowa, U. S. A.

Հայե'ր

Երբ նոր գլխարկի, օձիքի կամ ոևէ արական հանդերձեղենի պէտք ունենաք, գնացէք New York Hat House, 14 Front Street, Worcester, որ մէյն փողոցին մօտիկ է, հոն պիտի գտնէք լաւ ապրանքներ միայն, և շատ աժան։

PHARMACIE FRANCAISE,

NORBERT FRANCK.

311 7th AVENUE, NEW YORK.

Դեղագիրք կը պատրաստուին խնամով

BUSH & CO

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

ԳԵՂԱՊԳՈՐԾ

(Հաստատեալ ի 1849)

56 FRONT STREET WORCESTER, MASS.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին և չափաւոր գնով

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ· Ս· ԳԱԲՐԻԷԼԵԱՆ